# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2011 թվականի N 109-Ա

**ք. Հրազդան**

<<ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ>> ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 18-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանում ստեղծել <<Երեխայի տարիքը որոշող մարզային հանձնաժողով>> հետևյալ կազմով՝

***Կավալենկո Շահգալդյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ /հանձնաժողովի նախագահ/

***Գայանե Մարտիրոսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /քարտուղար/

***Արփյուշ Պետրոսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

***Լարիսա Մաղոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Աբովյան ծննդատուն>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

***Սուսաննա Սասորյան*** - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության Հրազդանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

***Արփյուն Մովսիսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզային ոստիկանության վարչության քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ /համաձայնությամբ/

***Հասմիկ Մակարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, կրթության բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ աշխատանքները իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N18-Ն որոշման պահանջներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ